Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 2

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2027/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով A 4 ֆորմատի թղթի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

17.11.2026 թվական ք. Գյումրի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Աստղիկ Ալեքսանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետ /նախագահ/,

Անահիտ Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի ավագ մասնագետ /խմբի անդամ/,

Իրինա Ջանոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի ավագ մասնագետ /խմբի անդամ/:

Քարտուղար՝ Զարիկ Մուրադյան

Հանձնաժողովը լսեց օրակարգի հետևյալ հարցերը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(զեկուցող՝ Ա. Ալեքսանյան)

1. Էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին,
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների մասին:
3. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հրավերի պահանջներին համապատասխանության հայտերի կազմման և ներկայացման մասին:
4. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1. Էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

(զեկուցող՝ Ա. Ալեքսանյան)

N	Ճ չափաբաժինների մասնակցած կազմակերպությունների անվանումները	էլեկտրոնային հասցե	հեռախոսահամար	ՀՎՀՀ	Հ/Հ	բանկի անվանումը
1	«ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ	vanesa.tender@mail.ru	(+374) 99 016 661	02337713	2470014207411007	Արդշինբանկ ԲԲԸ
2	«ԱՐԹ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	artplusgroupllc@mail.ru	(+374) 33 352 323	04246467	220123331716000	Ակբաբանկ ԲԲԸ
3	«ԲԼԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	inn_coffee@mail.ru	(+374) 33 226 600	02852673	1660030200799900	Էվոկաբանկ ԲԲԸ
4	Այթի Պլանետ ՍՊԸ	itplanetprof@mail.ru	(+374) 99 939 030	08337305	24140037371800	Յունիբանկ ԲԲԸ
5	Սմարթլայն ՍՊԸ	ssmartline@mail.ru	(+374) 55 300 093	01548908	1150009537660100	Ամիոբանկ ՓԲԸ

1. Ընդունել ի գիտություն, որ
Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի և առաջին տեղ գրաղեցրած

մասնակիցների մասին

Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	«ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ	611800	70901	20 %	85081.20	
1	2	«ԱՐԹ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	611800	465200	20 %	558240.00	
1	3	«ԲԼԵՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	611800	476000	20 %	571200.00	
1	4	Այթի Պլանետ ՍՊԸ	611800	499600	20 %	599520.00	
1	5	Սմարթլայն ՍՊԸ	611800	515375	20 %	618450.00	Մերժված

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2017թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները ըստ առաջին և հաջորդաբար տեղեր գրաղեցրած մասնակիցների որոշելու սկզբունքով:

Ընդունել ի գիտություն.

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Առաջին տեղ գրաղեցրած մասնակցի հրավերի պահանջներին համապատասխանության հայտերի կազմման և ներկայացման մասին:

N	Կազմակերպություն	Չափաբաժիններ	Գնահատում	Մեկնաբանություն
1	«ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ	1	անբավարար	1. Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու Դիմում-Հայտարարության մեջ լրացված չէ «ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ

			օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը»: 2. «Առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում» հատակ նշել առաջարկվող կոնկրետ ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվություն, որը **անշեղելիորեն** համապատասխանում է մեր կողմից պահանջվող բնութագրով ապրանքին, հակառակ դեպքում մասնակցի հայտը կմերժվի: Առաջարկում ենք ՀՀ գնումների օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները և ՀՀ գնումների միասնական AUCTION համակարգի միջոցով ներկայացնել պատվիրատուին:

(զեկուցող՝ Ա. Ալեքսանյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջը՝ մեկ աշխատանքային օրով կասեցվում է նիստը մասնակիցի՝ **«ՎԱՆԵՍԱ» ՍՊԸ** հայտում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունները վերացնելու համար:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

(զեկուցող՝ Ա. Ալեքսանյան)

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction համակարգի միջոցով գնման ընթացակարգի վերաբերյալ հարցում չի ստացել:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Աստղիկ Ալեքսանյան

Անդամներ՝ Իրինա Ջանոյան

Անահիտ Հարությունյան

Համակարգող քարտուղար՝ Զարիկ Մուրադյան